ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2023թ. դեկտեմբերի 31-ին
ավարտվող տարվա վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ

Բովանդակություն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	4
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	5
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	6
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	7

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

"Գրանթ Թորնթոն" ՓԲԸ
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծնթ.	31.12.2023թ.	31.12.2022թ.
ԱԿՏԻՎՆԵՐ		հազար դրամ	հազար դրամ
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	52,962	37,640
Ոչ նյութական ակտիվներ	5	4,124	2,748
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ		36,940	41,938
		94,026	**82,326**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ		64	17
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6	260,556	198,656
Հետաձգված ծախսեր		9,187	5,418
Տրված փոխառություններ		34,640	53,878
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	7	29,760	45,395
		334,207	**303,364**
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**428,233**	**385,690**
ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Կանոնադրական կապիտալ	8	8,000	100
Չբաշխված շահույթ		135,834	124,204
		143,834	**124,304**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Երկարաժամկետ վարկեր ֆինանսական կազմակերպություններից	9	21,266	11,984
Հետաձգված հարկային պարտավորություններ		-	120
		21,266	**12,104**
Ընթացիկ պարտավորություններ			
Երկարաժամկետ վարկերի կարճաժամկետ մաս	9	68,589	100,044
Կրեդիտորական պարտք շահութահարկ	10	12,277	28,400
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	10	182,267	120,838
		263,133	**249,282**
ԸՆԴԱՄԵՆԸ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**428,233**	**385,690**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից 2024թ. ապրիլ 19-ին: Կից ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Արմեն Հովհաննիսյան
Տնօրեն

Արևհատ Մարտիրոսյան
Գլխավոր հաշվապահ

ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

"Գրանթ Թորնթոն" ՓԲԸ
2023թ. դեկտեմբերի 31-ին
ավարտվող տարվա վերաբերյալ

	Ծնթ.	2023	2022
		հազար դրամ	հազար դրամ
Հասույթ	11	1,512,013	1,466,851
Վաճառքի ինքնարժեք		(1,135,589)	(1,077,552)
Համախառն շահույթ		**376,424**	**389,299**
Վարչական ծախսեր		(222,563)	(204,771)
Այլ եկամուտ	12	26,827	20,446
Այլ ծախսեր	13	(9,564)	(12,040)
Գործառնական շահույթ		**171,124**	**192,934**
Ֆինանսական ծախսեր		(5,271)	(12,853)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս)		1,529	(17,619)
Շահույթ մինչև հարկումը		**167,382**	**162,462**
Շահութահարկի գծով ծախս	14	(31,548)	(38,258)
Տարվա շահույթ		**135,834**	**124,204**
Այլ համապարփակ եկամուտ		-	-
Տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		**135,834**	**124,204**

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

"Գրանթ Թորնթոն" ՓԲԸ
2023թ. դեկտեմբերի 31-ին
ավարտվող տարվա վերաբերյալ

հազար դրամ

	Կանոնա-դրական կապիտալ	Չբաշխված շահույթ	Ընդամենը կապիտալ
Մնացորդն առ 1 հունվարի 2022թ.	**100**	**33,446**	**33,546**
Տարվա շահույթ	-	124,204	124,204
Շահաբաժինների բաշխում	-	(33,446)	(33,446)
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2022թ.	**100**	**124,204**	**124,304**
Կանոնադրական կապիտալի համալրում	7,900	-	7,900
Տարվա շահույթ	-	135,834	135,834
Շահաբաժինների բաշխում	-	(124,204)	(124,204)
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2023թ.	**8,000**	**135,834**	**143,834**

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

"Գրանթ Թորնթոն" ՓԲԸ
2023թ. դեկտեմբերի 31-ին
ավարտվող տարվա վերաբերյալ

	2023	2022
	հազար դրամ	հազար դրամ
Գործառնական գործունեությունից		
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ	1,748,348	1,552,438
Ստացված տոկոսային եկամուտ	350	-
Աշխատակիցների փոխհատուցումների գծով	(574,627)	(465,743)
Վճարումներ հարկերի գծով	(285,293)	(269,213)
Վճարում շահութահարկի գծով	(19,391)	(9,999)
Վճարում վարձավճարների գծով	(64,432)	(53,979)
Վճարումներ ծառայությունների գծով	(612,968)	(557,895)
Այլ ելքեր	(22,292)	(26,743)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**169,695**	**168,866**
Ներդրումային գործունեությունից		
Հիմնական միջոցների օտարումից մուտքեր	1,000	-
Հիմնական միջոցների ձեռքբերման գծով ելքեր	(19,346)	(50,344)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(18,346)**	**(50,344)**
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Կանոնադրական կապիտալի համալրում	7,900	-
Ստացված վարկերի, փոխառությունների մարում	(14,867)	(68,760)
Տոկոսների վճարում	(4,271)	(12,853
Շահաբաժինների վճարում	(157,028)	(13,130
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(168,266)**	**(94,743)**
Ընդամենը դրամական միջոցների զուտ աճ / (նվազում)	***(16,917)***	***23,779***
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ	1,282	(5,009)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբի դրությամբ	45,395	26,625
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջի դրությամբ	**29,760**	**45,395**

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

"Գրանթ Թորնթոն" ՓԲԸ
2023թ. դեկտեմբերի 31-ին
ավարտվող տարվա վերաբերյալ

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1 Կազմակերպության համառոտ բնութագիրը

"Գրանթ Թորնթոն" ՓԲԸ-ն (այսուհետև՝ Ընկերություն) հիմնադրվել է 2010թ.-ի նոյեմբերի 3-ին՝ հանդիսանալով "Գրանթ Թորնթոն Ամիո" ՍՊԸ-ի իրավահաջորդը, որը հիմնադրվել է 1997թ.-ի հունիսի 20-ին: Ընկերության կանոնադրությունը պետական ռեգիստրում գրանցվել է 2010թ.-ի նոյեմբերի 19-ին, գրանցման համարը՝ 264.120.09235, վկայական 03 Ա 090206: Ընկերության իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան 0015, Գրիգոր Լուսավորիչ 9, Երևան պլազա բիզնես կենտրոն: Հարկ վճարողի հաշվառման համարն է՝ 00040569:

2023թ. Ընկերության աշխատողների տարեկան միջին թիվը կազմել է 93 (2022թ.՝ 89):

1.2. Դուստր կազմակերպություններ

31.12.2023թ. դրությամբ Ընկերությունը չունի դուստր կազմակերպություններ:

2. Պատրաստման հիմքերը

2.1.Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

2.2. Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով:

2.3. Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և գործարքների տնտեսական բովանդակությունը:
Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով:

2.4. Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

2.5. Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Ընկերությունն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2023թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2023թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2023թ., որևէ էական ազդեցություն չեն ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ստանդարտ	**Ստանդարտի կամ մեկնաբանության անունը**	
ՖՀՄՍ 17	*Փոփոխություններ Ապահովագրական պայմանագրերում ՖՀՄՍ 17, ներառյալ ՖՀՄՍ 9-ի կիրառումից ժամանակավոր ազատման երկարաձգումը (ՖՀՄՍ 4 փոփոխություններ)*	*1 հունվարի 2023թ.*
ՀՀՄՍ 12	*Մեկ գործարքից առաջացող ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)*	*1 հունվարի 2023թ.*
ՖՀՄՍ 17	*ՖՀՄՍ 17-ի և ՖՀՄՍ 9-ի սկզբնական կիրառում – Համեմատական տեղեկատվություն (ՖՀՄՍ 17 փոփոխություն)*	*1 հունվարի 2023թ.*
ՀՀՄՍ 8	*Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում(ՀՀՄՍ 8 փոփոխություններ)*	*1 հունվարի 2023թ.*
ՀՀՄՍ 1	*Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում (ՀՀՄՍ 1 և ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2)*	*1 հունվարի 2023թ.*
ՀՀՄՍ 12	Միջազգային հարկային բարեփոխումներ – Pillar 2 կանոններ (ՀՀՄՍ 12 փոփոխություն)	*1 հունվարի 2023թ*
ՖՀՄՍ ՓՄՁ-ների համար	Միջազգային հարկային բարեփոխումներ – Pillar 2 մոդելային կանոններ (ՖՀՄՍ ստանդարտի փոփոխություն ՓՄՁ-ների համար)	*1 հունվարի 2023թ*

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխություններն էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

Ստանդարտ	Ստանդարտի կամ մեկնաբանության անունը	Տվյալ ամսաթվին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար կիրառելի
ՀՀՄՍ 1	*Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ (ՀՀՄՍ 1 փոփոխություն)*	*1 հունվարի 2024թ.*
ՖՀՄՍ 16	*Վարձակալության պարտավորություն Վաճառքի և հետադարձ վարձակալության գործարքի ժամանակ (ՀՀՄՍ 16 փոփոխություն)*	*1 հունվարի 2024թ.*
ՀՀՄՍ 1	*Ոչ-ընթացիկ պարտավորություններ պայմանագրերի հետ (ՀՀՄՍ 1 փոփոխություն)*	*1 հունվարի 2024թ.*
ՀՀՄՍ 7 և ՖՀՄՍ 7	*Մատակարարների ֆինանսական պայմանավորվածություններ (ՀՀՄՍ 7 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ)*	*1 հունվարի 2024թ.*
ՀՀՄՍ 21	*Փոխանակելիության բացակայություն (ՀՀՄՍ 21 փոփոխություն)*	*1 հունվարի 2025թ.*

3. Հաշվապահական հաշվառման էական քաղաքականության ամփոփ

3.1 Անընդհատության սկզբունք

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության սկզբունքի հիման վրա:

3.2 Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով:

3.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և գործարքների տնտեսական բովանդակությունը:
Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ ղեկավարության համոզմամբ այս արժույթն առավել օգտակար է ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

3.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ի համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Չնայած այս գնահատումների հիմքում ընկած են ընթացիկ իրադարձությունների

և գործողությունների վերաբերյալ տնօրինության լավագույն պատկերացումները, այնուամենայնիվ, փաստացի արդյունքները կարող են տարբերվել այս գնահատումներից:

3.5 Գործարքներ արտարժույթով

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը. 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում է 404.79 ՀՀ դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում է 393,57 ՀՀ դրամ), 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 Եվրոն կազմում է 447.90 ՀՀ դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 Եվրոն կազմում է 420.06 ՀՀ դրամ): Իրական արժեքով հաշվառվող և Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն գործարքի օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:
Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են այլ համապարփակ եկամուտներում:
Ընկերության ակտիվներն ու պարտավորությունները վերահաշվարկվում են (այլ արժույթից)՝ դրամի հաշվետու ժամանակաշրջանի վերջի օրվա դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքով: Եկամտային և ծախսային հոդվածները վերահաշվարկվում են (այլ արժույթի)՝ օգտագործելով ժամանակաշրջանի միջին հաշվարկային փոխարժեքը: Փոխարժեքային տարբերությունների արդյունքը գրանցվում է անմիջապես այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում:

3.6 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:
Մաշվածությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Համակարգչային տեխնիկա	-	1 տարի
Արտադրատնտեսական գույք	-	5 տարի
Տրանսպորտային միջոցներ	-	5 տարի
Այլ հիմնական միջոցների դասեր	-	8 տարի

3.7 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 10 տարի ոչ նյութական ակտիվների դասի համար:

3.8 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝օգտագործելով [առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ) կամ միջին կշռված մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

3.9Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ երբ փոխանցվում են ֆինանսական ակտիվները, բոլոր նշանակալից ռիսկերն ու հատուցումները:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:
Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնք սկզբնապես դասակարգվում են որպես ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ՝չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով:

3.10 Սեփական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով:
Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

3.11 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:
Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուդվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ հարկվող շահույթի վրա:
Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային

հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:
Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցվում են, երբ կա իրավաբանորեն ամրագրված իրավունք՝ հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվները ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց, և երբ դրանք վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից, և Ընկերությունը մտադիր է զուտ հիմունքով մարել ընթացիկ հարկային պարտավորություններն ու ակտիվները:

3.12 Հասույթի ճանաչում

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ հաշվի առնելով Ընկերության կողմից տրամադրված ցանկացած առևտրական զեղչերը և իջեցումների գումարները: Հասույթից նվազեցվում են հաճախորդների կողմից վերադարձվելիք գնահատված իջեցումները և նմանատիպ այլ նվազեցումներ:
Ծառայությունների մատուցում

Ծառայությունների մատուցումից ստացված հասույթը ճանաչվում է, երբ՝

- հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը,
- հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն,
- հնարավոր է արժանահավատորեն որոշել հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործարքի ավարտման աստիճանը,
- հնարավոր է արժանահավատորեն որոշել գործարքի կատարման ժամանակ արված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները:

Շահաբաժիններից և տոկոսներից եկամուտ

Շահաբաժիններից եկամուտը ճանաչվում է, երբ սահմանված է վճարը ստանալու բաժնետերերի իրավունքը:
Տոկոսային եկամուտը ճանաչվում է համամասնության հիմունքով՝ մնացորդային արժեքի նկատմամբ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը, որը զեղչում է ակնկալվող ապագա դրամական միջոցների ներհոսքերը ֆինանսական ակտիվի ակնկալվող ժամկետում՝ մինչև ակտիվի զուտ հաշվեկշռային արժեքը:

Վարձակալական եկամուտ
Վարձակալական եկամուտը ճանաչվում է գծային մեթոդով վարձակալության ժամկետի ընթացքում:

4. Հիմնական միջոցներ

հազար դրամ

	Տրանսպոր-տային միջոցներ	Արտադրա-տնտեսա-կան գույք	Հաշվողա-կան տեխնիկա	Այլ հիմնա-կան միջոցներ	Ընդա-մենը
Սկզբնական արժեք					
Առ 1 հունվարի 2022թ.	**9,751**	**38,477**	**35,082**	**37,340**	**120,650**
Ավելացումներ	-	2,400	27,890	5,798	36,088
Նվազեցումներ	-	-	(7,049)	-	(7,049)
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	**9,751**	**40,877**	**55,923**	**43,138**	**149,689**
Ավելացումներ	-	9,489	22,013	1,342	32,844
Նվազեցումներ	(9,751)	-	-	(129)	(9,880)
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	**0**	**50,366**	**77,936**	**44,351**	**172,653**
Կուտակված մաշվածություն					
Առ 1 հունվարի 2022թ.	**9,751**	**12,227**	**34,187**	**26,206**	**82,371**
Ավելացումներ	-	6,971	24,064	5,692	36,727
Նվազեցումներ	-	-	(7,049)	-	(7,049)
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	**9,751**	**19,198**	**51,202**	**31,898**	**112,049**
Ավելացումներ	-	7,678	5,172	4,543	17,393
Նվազեցումներ	(9,751)	-	-	-	(9,751)
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	**0**	**26,876**	**56,374**	**36,441**	**119,691**
Առ 1 հունվարի 2022թ.	**-**	**26,250**	**895**	**11,134**	**38,279**
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	**-**	**21,679**	**4,721**	**11,240**	**37,640**
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	**-**	**23,490**	**21,562**	**7,910**	**52,962**

Հիմնական միջոցներ

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը գրավադրված հիմնական միջոցներ չունի:

5. Ոչ նյութական ակտիվներ

հազար դրամ

	Համակարգ-չային ծրագրեր	Լիցենզիաներ և ապրանքանիշեր	Այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք				
Առ 1 հունվարի 2022թ.	**2,454**	**18,307**	**16,776**	**37,537**
Ավելացումներ	-	1,387	5,485	6,872
Նվազեցումներ	-	-	-	-
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	**2,454**	**19,694**	**22,261**	**44,409**
Ավելացումներ	2,615	5,448	193	8,256
Նվազեցումներ	**(3,715)**	**(5,727)**	**(374)**	**(9,816)**
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	**1,354**	**19,415**	**22,080**	**42,849**
Կուտակված ամորտիզացիա				
Առ 1 հունվարի 2022թ.	**2,454**	**16,498**	**14,717**	**33,669**
Ավելացումներ	-	2,263	5,729	7,992
Նվազեցումներ	-	-	-	-
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	**2,454**	**18,761**	**20,446**	**41,661**
Ավելացումներ	-	3,560	707	4,267
Նվազեցումներ	(1,100)	(5,727)	(376)	(7,203)
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	**1,354**	**16,594**	**20,777**	**38,725**
Ընթացիկ արժեք				
Առ 1 հունվարի 2022թ.	**-**	**1,809**	**2,059**	**3,868**
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	**-**	**933**	**1,815**	**2,748**
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	**-**	**2,821**	**1,303**	**4,124**

6. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

հազար դրամ

	31.12.2023	31.12.2022
Առևտրային դեբիտորական պարտքեր ծառայությունների գծով	150,930	162,954
Կանխավճարներ	103,893	30,673
Այլ	5,733	5,029
	260,556	**198,656**

7. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

հազար դրամ

	31.12.2023	31.12.2022
Բանկային հաշիվներ	29,760	45,239
Դրամարկղ	-	156
	29,760	**45,395**

8. Կանոնադրական կապիտալ

Բաժնետոմսերի քանակը, եթե այլ բան նշված չէ	Սովորական բաժնետոմսեր 2023	Սովորական բաժնետոմսեր 2022
Հայտարարված բաժնետոմսեր		
Սովորական բաժնետոմսերի քանակը, յուրաքանչյուրը՝ 1.00 դրամ		100,000
Սովորական բաժնետոմսերի քանակը, յուրաքանչյուրը՝ 80.00 դրամ	100,000	
Ընդամենը բաժնետոմսերի քանակ	**100,000**	**100,000**

2023թ. Նոյեմբերի 29-ի բաժնետերերի արտահերթ ժողովի արտահերթ արձանագրությամբ, որոշվել է բաժնետերերին վճարված շահաբաժիններից՝ 7,900 հազար դրամի չափով կատարել ներդրում Ընկերության կանոնադրական կապիտալում: Արդյունքում 1 բաժնետոմսի անվանական արժեքը աճել է 79.00 դրամով:

9. Վարկեր ֆինանսական կազմակերպություններից

հազար դրամ

	2023		2022	
	Ոչ ընթացիկ	Ընթացիկ	Ոչ ընթացիկ	Ընթացիկ
Բանկային վարկեր		57,291		90,173
Լիզինգային պայմանագրեր	21,266	11,298	11,984	9,871
	21,266	**68,589**	**11,984**	**100,044**

10. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

հազար դրամ

	31.12.2023	31.12.2022
Առևտրային պարտքեր		
Ծառայությունների գծով	28,877	33,196
Կանխավճարների գծով	112,204	32,415
	141,081	65,611
Հարկերի գծով		
Շահութահարկի գծով	12,277	28,400
Եկամտային հարկի գծով	19,288	11,395
ԱԱՀ-ի գծով	10,846	1,545
Սոց վճարի գծով	892	816
	43,303	42,156
Այլ կրեդիտորական պարտքեր		
Աշխատակիցների փոխհատուցման գծով	10,114	224
Կրեդիտորական պարտք հիմնադիրներին	-	41,089
Այլ	46	158
	10,160	41,471
	194,544	**149,238**

Ծառայությունների և ապրանքների ձեռքբերման գծով առաջացած պարտավորությունների մարման միջին տևողությունը կազմում է մինչև երկու ամիս: Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Ընկերությունը ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություն, որն ապահովում է բոլոր պարտավորությունների ժամանակին կատարումը:

11. Հասույթ

հազար դրամ

	31.12.2023	31.12.2022
Աուդիտորական գործունեությունից հասույթ	661,362	616,622
Խորհրդատվական ծառայություններից հասույթ	205,677	445,609
Այլ ծառայություններից հասույթ	644,974	404,620
	1,512,013	**1,466,851**

12. Գործառնական այլ եկամուտներ

հազար դրամ

	2023	2022
Վարձակալություն	18,637	18,637
Փոխհատուցվող գումարներ	2,547	1,307
Հիմնական միջոցների օտարումից	833	-
Այլ	4,810	502
	26,827	**20,446**

13. Գործառնական այլ ծախսեր

հազար դրամ

	2023	2022
Դեբիտորական պարտքերի դուրսգրում	(5,924)	(1,763)
Տրամադրված օգնություններ	(2,915)	(4,955)
Անդամավճարներ	(725)	(1,319)
Այլ ծախսեր	-	(4,003)
	(9,564)	**(12,040)**

14. Շահութահարկ

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությամբ շահութահարկի դրույքաչափը կազմում է 18% (2022թ. - 18%):

հազար դրամ

	2023	2022
Ընթացիկ հարկի գծով ծախս	(31,668)	(38,399)
Հետաձգված հարկ	120	141
	(31,548)	**(38,258)**

15. Կարևոր հաշվապահական գնահատումներ

Ընկերությունն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, հաջորդ ֆինանսական տարում կենթարկվեն էական ճշգրտումների ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներում:

16. Ֆինանսական գործիքներից բխող ռիսկեր

Բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունը հակված է ֆինանսական գործիքներից բխող տարբեր ռիսկերի՝ շուկայական (ներառյալ՝ արժութային, տոկոսադրույքային, այլ գնային ռիսկերը), իրացվելիության և պարտքային: Ընկերությունը չի կիրառում ածանցյալ գործիքներ հեջավորելու նշված ռիսկերը:

16.1 Շուկայական ռիսկ

16.1.1 Արժութային ռիսկ

Արժութային ռիսկը այն ռիսկն է, երբ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը տատանվում են արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների հետևանքով:
Ընկերության արժութային ռիսկը հիմնականում կապված է արտարժույթով արտահայտված տրված ու ստացված փոխառությունների, դեբիտորական ու կրեդիտորական պարտքերի, և դրամական միջոցների հետ: 31.12.2023թ.-ի դրությամբ չկա էական տարբերություն արտարժույթով արտահատված ակտիվների և պարտավորությունների միջև:

16.1.2 Տոկոսադրույքային ռիսկ

Տոկոսադրույքային ռիսկը այն ռիսկն է, երբ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը տատանվում են շուկայական տոկոսադրույքների փոփոխության հետևանքով:
Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերության ստացված վարկերը հաշվառվում են ամորիտզացված արժեքով, իսկ կապակցված կողմերից ստացված կամ նրանց տրամադրված փոխառությունները հաշվառվում են անվանական արժեքով, քանի որ նրանք ըստ բնույթի ցպահանջ փոխառություններ են:

16.1.3 Այլ գնային ռիսկ

Գնային ռիսկը այն ռիսկն է, երբ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը տատանվում են շուկայական գների փոփոխության արդյունքում (բացի տոկոսադրույքային ռիսկից և արժութային ռիսկից առաջացողներից): Ղեկավարությունը գնահատում է, որ հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը էականորեն չի տարբերվում նրանց հաշվեկշռային արժեքից:

16.2 Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը այն ռիսկն է, երբ գործընկերների կողմից Ընկերության նկատմամբ իրենց պարտավորությունները չկատարելու արդյունքում՝ Ընկերությունը կարող է կրել ֆինանսական կորուստներ: Պարտքային ռիսկը առաջանում է բանկային մնացորդներից, առևտրային և այլ դեբիտորական պարտքերից:
120 օրից ավելի դեբիտորական պարտքերը ներառում են ավարտվածության աստիճանով որոշված հասույթները, որոնք կմարվեն աշխատանքների ավարտից հետո, հաջորդ հաշվետու ժամանակաշրջանում:

Ընկերությունը հաշվետու և նախորդ տարիներին չի ձևավորել առևտրային դեբիտորական պարտքերի անհավաքելիության գծով պահուստ, քանի որ ըստ Ընկերության ղեկավարության գնահատման, տվյալ ռիսկը հաշվետու ամսաթվի դրությամբ էական չէ:

16.3 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը այն ռիսկն է, երբ Ընկերությունը դժվարություններ է ունենում այն ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվներ տրամադրելով:
Ընկերության ղեկավարությունը շարունակական մոնիտորինգ է իրականացնում Ընկերության իրացվելիության գծով՝ ապահովելու համար գործառնական գործունեության համար անհրաժեշտ դրամական միջոցների առկայությունը:

17. Պայմանական դեպքեր

17.1 Ապահովագրություն

Ընկերությունը ունի մասնագիտական ապահովագրություն՝ երրորդ կողմերի նկատմամբ պարտավորությունների հանդեպ:

17.2 Դատական հայցեր

2023թ. դեկտեմբերի 31-ի և այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Ընկերության կողմից և Ընկերության դեմ հարուցված դատական հայցեր չեն եղել: